ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, 0062, ք. Երևան, Գայի 19, հեռ.՝ (+374 11) 518 686, էլ. փոստ՝ nor_norq@yerevan.am

№ 27/19702-24

8 փետրվարի 2024թ.

«ԵՂՆԻԿԻՊԵՍ» ՍՊ ընկերություն
Մ. ՀԱԿՈԲՅԱՆԻՆ
(ք. Երևան, Այգեստան, 11 փ. 109տ.)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «Եղնիկիպես» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ միջև կնքված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/30-2 ծածկագրով Կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի ասֆալտբետոնե ծածկի վերոնորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 3.1.4 կետի «բ» և «գ» ենթակետերի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացույցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրի հ. 2 հավելվածի աշխատանքների կատարման ժամանակացույցի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետ է սահմանված շինարարական աշխատանքների և տեխնիկական հսկողության ծառայությունների ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 180-րդ օրացուցային օրը ներառյալ:

Պայմանագրի 2023 թվականի հոկտեմբերի 18-ին կնքված N 1 համաձայնագրի 1.1 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքները, որ Ընկերությունը խախտել է Պայմանագրի 2023 թվականի հոկտեմբերի 18-ին կնքված N 1 համաձայնագրի 1.1 կետով նախատեսված ժամկետը, և Ընկերության կողմից կատարված աշխատանքի մի մասը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին՝ Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը միակողմանի հրաժարվում է Պայմանագրից մասնակի՝ համարելով այն լուծված 12625128 ՀՀ դրամ գումարի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ

հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Եթե՝

սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները /տուժանքի մասին համաձայնագրերը՝ կից վճարման պահանջագրերի հետ միասին/, սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից համապատասխանաբար 3802625 ՀՀ դրամ և 1267541 ՀՀ դրամ Երևանի քաղաքապետարանի 900015211429 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՏԻԳՐԱՆ ՏԵՐ-ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Կատարող՝ Հ. Մարտիրոսյան
Հ. Միերյան
Կոմունալ տնտեսության և բազմաբնակարան
շենքերի կառավարման մարմինների հետ
աշխատանքների կազմակերպման բաժին
Հեռ.՝ 011 51 86 76